ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 207-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021 թվականի N 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022թ-ի մարտի 2-ի N 19-Ա որոշումամբ, հաշվի առնելով, որ հողամասը չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի հատակագիծը՝ տրված «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից, ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Փարաքար գյուղում գտնվող 3470,5 քառակուսի մետր մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ–ի կողմից տրված հողամասի հատակագծի հիման վրա:
2. Հողատարածքին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց 1/1 հողամաս:
3. 3470,5 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հուլիսի 11
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 208-Ա

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման՝ տրված 2022 թվականի հուլիսի 6-ին «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից և համասեփականատեր Հայկ Ռազմիկի Ջեյնալյանի 2022 թվականի հուլիսի 8-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Հայկ Ռազմիկի Ջեյնալյանին և մյուսներին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-082-0066-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Առանձնացվող հատված 1)՝ 0.0902 հա մակերեսով հողամասին և շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Պ. Սևակի փողոց N 2 բնակելի տուն:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Առանձնացվող հատված 2)՝ 0.0598 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Պ. Սևակի փողոց N 2/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հուլիսի 11

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 209-Ա

## ՎԱՐԴՈՒՀԻ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնոդրության 14-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Էրեբունի փողոց 23 տան հասցեում բնակվող Վարդուհի Տերտերյանի 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 1430 դիմումը, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 6-րդ նիստի արձանագրությունը. ***Որոշում եմ՝***

1. Վարդուհի Հայկազի Տերտերյանին /ծնված 17.07.1956թ. Ն/Ք 013093372, տրված 08.11.2021թ., 057-ի կողմից, ՀԾՀ 6707550217/, սահմանել Արուխան Ալեքսանդրի Սուքիասյանի նկատմամբ /ծնված՝ 23.07.1938թ., տրված 05.05.2007թ., 057-ի կողմից/ պատրոն (օգնական):

2. Հսկողություն սահմանել Վարդուհի Տերտերյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վ. Տերտերյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022թ. հուլիսի 11
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 210-Ա

### ՏԱՏՅԱՆԱ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 14-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Կոմունայի փողոցի թիվ 13 հասցեի բնակչուհի Տատյանա Անուշավանի Կարապետյանի 2022 թվականի մայիսի 17-ի թիվ 1635 դիմումը, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 6-րդ նիստի արձանագրությունը. *Որոշում եմ՝*

1. Տատյանա Անուշավանի Կարապետյանին / ծնված 06.11.1962թ. անձնագիր՝ AR 0536496 տրված 13.12.2017թ., 057-ի կողմից/ սահմանել պատրոն (օգնական) Ռիտա Անուշավանի Սաֆարյանի /ծնված 12.05.1960թ., անձնագիր՝ AU 0261952 տրված 10.05.2021թ., 064-ի կողմից/ նկատմամբ :

2. Հսկողություն սահմանել Տատյանա Անուշավանի Կարապետյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տատյանա Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 11
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 211-Ա

## ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ հոդվածի առաջին կետով, 135-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի 02-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի առաջին ենթակետի ա) պարբերությամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Շառլ Ազնավուրի փողոց տուն 66 հասցեի բնակիչ Գագիկ Հովհաննիսյանի 2022 թվականի հունիսի 13 –ի թիվ 1540 դիմումը, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի << «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 7-ի թիվ 6-րդ նիստի արձանագրությունը. *Որոշում եմ*՝

1. Գագիկ Համբարձումի Հովհաննիսյանին / ծնված 28.01.1976թ., անձնագիր՝ AV0209965 տրված 06.05.2022թ., 057-ի կողմից/ նշանակել խնամակալ՝ չափահաս Համբարձում Գագիկի Հովհաննիսյանի /ծնված 25.07.2001թ., անձնագիր՝ AT0406269, տրված 04.03. 2020թ.057-ի կողմից/ նկատմամբ:

2. Հսկողություն սահմանել Համբարձում Գագիկի Հովհաննիսյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 11
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 212-Ա

## ԱՐՈՒՍՅԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ հոդվածի առաջին կետով, 135-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի, առաջին ենթակետի բ) պարբերությամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան բնակավայրի Մասիսի փողոցի թիվ 9 հասցեի բնակչուհի Արուսյակ Աղասու Գրիգորյանի 2022 թվականի մայիսի 30-ի թիվ 1402 դիմումը, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի << Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի>> 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 6-րդ նիստի արձանագրությունը. Որոշում եմ՝

1. Արուսյակ Աղասու Գրիգորյանին / ծնված 23.08.1983թ. Ն/Ք՝009268863 տրված 26.12.2017թ., 057-ի կողմից/ նշանակել հոգաբարձու՝ անչափահաս Էլեն Հովհաննեսի Գրիգորյանի /ծննդյան վկայական՝ ԱԱ051864/ նկատմամբ, մինչև նրա 18 տարին լրանալը:

2. Հսկողություն սահմանել Արուսյակ Աղասու Գրիգորյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է Ա Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 11
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 213-Ա

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի ԹԻՎ 199 –Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 7-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու մասին» N 199-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հուլիսի 7
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 214-Ա

### ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 13-Ն հրամանի 11 կետով. ***որոշում եմ՝***

1. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ՝համաձայն հավելվածի:
2. Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գայանե Մանուկյանին՝ կազմել մրցույթների հայտարարության տեքստերը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:
3. Մրցույթների անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար Աննա Կոստանյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. Հուլիսի 13
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 215-Ա

## ԿԱՐԱՊԵՏ ԱՐՇԱՎԻՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Հաբշին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի հունիսի 7-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի մայիսի 31-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20224PV6YW), սեփականատեր Կարապետ Արշավիրի Վարդանյանի 2022 թվականի հունիսի 16-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող Կարապետ Արշավիրի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0075-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 22.89 քառակուսի մետր արտաքին մակերեսով լողավազանը, 10.63 քառակուսի մետր արտաքին մակերեսով թռչնագոմը, 3.91 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ստյոպա Աբգարյան» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր լողավազանի, թռչնագոմի և պարսպի համար կազմում է 1389.6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 52 012,73 (հիսուներկու հազար տասներկու դրամ յոթանասուներեք լումա) ՀՀ դրամ:

3. Հողամասին և շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Ա. Խաչատրյան փողոց 1-ին նրբանցք թիվ 23 շինություն:

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900032519154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 13

գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 216-Ա

## ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած 2 ընտանիքի տրամադրել դրամական օգնություն՝ յուրաքանչյուր ընտանիքին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի, ընդամենը 80 000 ՀՀ դրամ:

2. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ.հուլիսի 14
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 217-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԻՄՔՈՎ ՀՈՂ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-3-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երիտասարդության փողոց 103 տան բնակիչ Ժիրայր Ռաֆիկի Արշակյանի մահից հետո սեփականատերեր են հանդիսանում Էմմա Վարդգեսի Արշակյանը, Կարեն Ժիրայրի Արշակյանը, Էդգար Ժիրայրի Արշակյանը և Սամվել Ժիրայրի արշակյանը /հիմք՝ 1990 թվականի օգոստոսի 13-ի Էջմիածնի շրջանի Մերձավան գյուղական խորհրդի գործկոմի թիվ 8 նիստի արձանագրությունից քաղվածք, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ՝ 1601-ով) և «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից 2022 թվականի ապրիլի 1-ին տրված հողամասի և շինության հատակագիծը/ հողամասի նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու և սեփականաշնորհված հողամասից ավել օգտագործվող հողամասն իրեն հատկացնելու խնդրանքը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկանքները թիվ ԱՏ-03032022-99-0250 և թիվ ԱՏ-09032022-04-0269, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող կառույցներն իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում. ***որոշում եմ՝***

1. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 04-065-0069-0009) Էմմա Վարդգեսի Արշակյանին, Կարեն Ժիրայրի Արշակյանին, Էդգար Ժիրայրի Արշակյանին և Սամվել Ժիրայրի Արշակյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, յուրաքանչյուրին իր մասով 800.0 քառակուսի մետր մակերեսով տնամերձ հողամասին կից, ավել զբաղեցրած 160.0 քառակուսի մետր մակերեսով հողամաս անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով, իսկ 108.0 քառակուսի մետր մակերեսով հողամաս օտարել նրան ուղղակի վաճառքի միջոցով՝ հողամասի կադաստրային արժեքի չափով, 1 քառակուսի մետրի համար 4441.8 ՀՀ դրամ, որը 108.0 քառակուսի մետրի համար կկազմի 479 714,4 (չորս հարյուր յոթանասունինը հազար յոթ հարյուր տասնչորս ՀՀ դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի Մերձավան գյուղի ֆոնդային եկամուտների 900325175132 հաշվեհամարին:

2. Վերականգնել Էմմա Վարդգեսի Արշակյանի (ծնված 28.02.1960 թվականին), Կարեն Ժիրայրի Արշակյանի (ծնված 23.05.1983 թվականին), Էդգար Ժիրայրի Արշակյանի (ծնված 16.06.1985 թվականին) և Սամվել Ժիրայրի Արշակյանի (ծնված 25.05.1989 թվականին) Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող գույքային միավորների՝ 1991 թվականին կառուցված բնակելի տան և 1991 թվականին կառուցված զուգարանի նկատմամբ:

3. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ,Փարաքար համայնք գյուղ Մերձավան, Երիտասարդության փողոց թիվ 103 բնակելի տուն:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 14
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 218-Ա

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման՝ տրված 2022 թվականի հուլիսի 13-ին «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից և սեփականատեր Նորիկ Անուշավանի Այվազյանի 2022 թվականի հուլիսի 14-ի դիմումը. ***որոշում եմ***՝

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Նորիկ Անուշավանի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0549-0004 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Տարանջատվող հատված 1)՝ 0.6500 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց N 36 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Տարանջատվող հատված 1)՝ 1.0574 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Դեմիրճյան թաղամաս 1-ին փողոց N 36/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հուլիսի 14
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 219-Ա

## ՇՈՂԵՐ ԱՎԵՏԻՍԻ ԳԱՐԳՈՒՐԵԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի հունիսի 17-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի հունիսի 13-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022B5QMD3), սեփականատեր Շողեր Ավետիսի Գարգուրեանի 2022 թվականի հունիսի 20-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Կորյունի փողոց 3-րդ նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող Շողեր Ավետիսի Գարգուրեանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0148-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 74,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան հիմքը և 1,5 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԿԱՐԵՆ ՄԱԶԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան հիմքի համար կազմում է 2725 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1635 դրամ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 206 555 (երկու հարյուր վեց հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 15
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

15 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 220-Ա

### ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով, միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 02 մարտի 2022թ.-ի N 19-Ա որոշմամբ, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի հունիսի 15-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022QBHAE8), սեփականատեր Աշոտ Սարգսի Խաչատրյանի 2022 թվականի հունիսի 15-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Սևանի փողոց թիվ 16/2 հասցեում գտնվող Աշոտ Սարգսի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0048-0021 կադաստրային ծածկագրով հողամասի վրա կառուցված 6.2 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Սևան Մանվելի Թովմասյան» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Աշոտ Սարգսի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0048-0021 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող, Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր պարիսպի համար 1181,4 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 7 324,68 (յոթ հազար երեք հարյուր քսանչորս դրամ վաթսունութ լումա) ՀՀ դրամ:

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մերձավան գյուղի 900325175157 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 15
գ.Փարաքար